

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարեկանը 6 բուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրուած են միմիայն խմբագրատան մէջ:
Մեր հասցէն. Тифлисть. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունուած է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նկեղեցի և բարոյականութիւն.—Ներքին ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.
—ԱՐՍՏՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեղեկութիւններ թիւ-
քաց Հայաստանից. Արտաքին լուրեր.—ԽԱՆՆ
ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՆՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
ՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գաւառական նամակներ:

ԵԿԵՂԵՑԻ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Վերջին օրերը մի անցք վրայդեցին և
ամբողջ և. Պոլսը և անկերջանալի խօսակ-
ցութիւններն առիթ է տուել թէ հասա-
րակութեանը և թէ մամուլին և. Պոլսի մի
հարուստ Հայ էֆէնդի, մի ինչ որ Շահ-
պազեան, կենդանի կին ու երեսներ էլ
ունենալով, թողել է կնոջը ու կրկին ամուս-
նացել է եկեղեցական պատկով մի այլ կնոյ՝
հետ և. Պոլսի հայոց կրօնական ժողովու-
րդածին է այդ կրկնամուսնութիւնը նոյն-
վերով, անիծելով թէ իրան Շահպազեան
էֆէնդին ու նրա նոր ամուսնուն և թէ
վերջինի երեսներին:

Կ. Պոլսի հայոց հասարակութիւնը և
մամուլը հիացած են եկեղեցականների
վարմունքից, նկատելով անէծքի մէջ եկե-
ղեցական իշխանութեան ոյժի, հաստատա-
մունքեան և կամքի զօրութեան մի ապա-
ցոյց:

Ընդունելով էլ Շահպազեան էֆէնդիի
վարմունքը, որպէս վերին աստիճանի ան-
բարոյականութիւն, քննելը հարցը թէ քա-
ղաքացիական, թէ կրօնական և թէ բարոյա-
կան տեսակետներից:

Քաղաքացիական տեսակետից նայե-
լով հարցի վրա, չենք կարող չը խոստո-
ւանալ, որ այնպիսի հասարակութիւնների
մէջ, որտեղ օրէնքը չէ ընդունուած ոչ ա-
մուսնական ապահարգան, ոչ էլ քա-
ղաքացիական ամուսնութիւն, որտեղ եկե-
ղեցին իր օրէնքներով ամենագոր է և միակ
դատաւոր ամուսնական հարցերում, Շահ-
պազեանի վարմունքը, որ կրում է կրկնա-
մուսնութեան տղել անունը, անպատճառ
պարի պատժելի եկեղեցական օրէնքներով:
Ուրիշ երկրներում չէր լինի կրկնամուս-
նութիւն, քանի որ ամուսինները, որոնք
կուգնային միմեանցից բաժանվել, միջոց
կունենային նախ ձեռք բերել ապահար-
գան և ապա կը կարողանային դարձեալ

օրինական ձանապարհով նոր ամուսնական
կապեր կապել: Այն ինչ այնպիսի մարդ-
կային համայնքների մէջ, որտեղ ոչ քա-
ղաքացիական պատկ կայ, ոչ էլ ապահար-
գան, եկեղեցուն կատարեալ իրաւունք է
վերապահված պատժել այն զործողութիւ-
նը, որ համարվում է նրա տեսակետից ա-
պօրինի: Այլ հարց է թէ ներդաւածու-
թեան և ողորմածութեան սկզբունքների
վրա հիմնված քրիստոնէական եկեղեցին,
հասկանալով որ շատ անգամ երբ անհրա-
ժեշտ օրէնքը բացակայ է, որով մի հա-
րաւոր էլ է տրվում մարդկանց իրանց ըն-
տանեկան ու հասարակական բաղադրեալ
յարաբերութիւնների մէջ, եկեղեցին պատ-
ժելով էլ իր տեսակետից ապօրինի զործ-
ողութիւնը, կարող է այնու ամենայնիւ
մեղմ կերպով պատժել այն յանցանքը, որ
յանցանք չէր էլ համարվի, եթէ երկրորդ
անգամ ամուսնական կապեր կապելուց ա-
ռաջ լինէր ապահարգան ձեռք բերելու
հնարաւորութիւնը:

Նկեղեցին, քրիստոնէական եկեղեցին, կա-
րող էր պատժել կրկնամուսնացողներին
անվանել հրատարակելով նրանց ամուսնու-
թիւնը և ոչ թէ միջնադարեան նոյնը, ա-
նէ՛ք արձակելով երկրորդ ամուսնութիւն
կատարած զոյգի դէմ, և դրանով էլ չը բաւա-
կանացած անիծելով, եկեղեցու զրկից աք-
սորելով կնոյ մատաղահաս մանուկներին
էլ, որոնք իրանց ծնողների վարմունքի մէջ
ամենաին մամուլից չեն, կատարեալապէս
անմեղ են... Բայց արանց, քրիստոնէական
եկեղեցուն վայել էր, իր անողորմ վճռը
կայացնելուց առաջ, քննել հարցը կողմնա-
բար և բազմակողմանի կերպով, լսել երկու
կողմի վկայութիւնները, և ոչ թէ սարսափ
ազդող որոշում կայացնել մեղադրեալի վի-
ճակի վրա, առանց փաստաբանութեան մի
խօսք անգամ լսելու մեղադրեալի բերանից...

Եթէ ընդունենք որ կրօնը և բարոյակա-
նութիւնը համաձայն զաղափարների
ունենան կրօնի և բարոյականութեան
տեսակետից անարդար է նախ պատժելով
յանցաւոր ծնողներին, մի և նոյն ժամանակ
պատժել անէծքով անմեղ մանուկներին էլ:
Երկրորդ անարդար է պատժել մի Շահպա-
զեանին անլսելի խտրութեամբ, կարծես թէ
այդ մարդը ամբողջ քաղաքի, կամ նոյն իսկ
ամբողջ ազգի մէջ միակ հրեշն է, միակ յան-
ցաւորն է, միակ անբարոյական մարդն է:
Ինչի եկեղեցին ընդունում է որ օրինական

ձեռով կատարված կրկնամուսնութիւնը, այն
էլ երբ որ ուրիշ էլ չը կայ միմեանցից
բաժանվել ցանկացող ամուսինների համար,
բացի ապօրինի կենսակցութիւնից, քա-
նի որ ապահարգան չը կայ, աւելի անբա-
րոյական վարմունք է, քան թէ այն հազա-
րաւոր ամուսինների վարմունքը, որոնք ու-
նենալով կին և ընտանիք, բացի հարազատ
կնոջից, գուցէ նոյն իսկ հարեան տան մէջ
իրանց փողով պահում են մի սիրուհի, ո-
րից ունեն նոյնպէս անհարազատ զաւակ-
ներ: Բայց այդ տեսակ բազմակցութիւն
չէ ընդունվում որպէս անբարոյական վար-
մունք և չէ պատժվում եկեղեցուց, որով-
հետեւ քա հրապարակական չէ, այլ ծա-
ծուկ: Շահպազեան պատժվում է եկեղեցու
անէծքով, իսկ գուցէ նոյն և. Պոլսի քաղա-
քի մեծատուն էֆէնդիների մեծ մասը
բազմակցութեամբ են ապրում, ունենալով
բացի հարազատ կնոջից մի մի սիրուհի և
նրանցից էլ անհարազատ զաւակներ...
Բայց եկեղեցականները սրանց վրա ներո-
ղաւոր աչքով են նայում: Նկեղեցին սովո-
րութիւն ունի պատժել միմիայն հրապա-
րական վարմունք, միմիայն ձեւականու-
թիւնից շեղվելը, ձեւական օրինականութեան
թիւնի կանոնների խախտելը, իսկ ոչ թէ
անբարոյականութեան էութիւնը, քանի որ
ամենաստոր անբարոյականութեան ամեն
տեսակները, եթէ զաղտնի են պահվում
(թէ և ամենքին յայտնի են), չեն խախ-
տում ընդունված պաշտօնական ձեւականու-
թիւնը:

Վերջին տեղեկութիւններից իմացանք,
որ Շահպազեան էֆէնդին, երբ ամբողջ ըն-
տանիքով եկեղեցուց նոյնված լինելով,
վճռել է զիմել մահապատկանութեան գիր-
կը... Կրկին Շահպազեան աղմուկներ և. Պոլսի
հայոց հասարակութեան մէջ...

Կարծես թէ մի օր և էֆէնդիի քրիս-
տոնէութիւնից դէպի մահապատկանութիւն
անցնելը մեծ կորուստ է հայոց ազգի հա-
մար: Մի անհատի, այն էլ թիւքաց մի
պաշտօնակցի դէպի մահապատկանութիւն
անցնելը, որ քրիստոնէայ եղած ժամանակն
էլ իր մէջ հայութեան ոչինչ մի նշոյլ չէր
ցոյց տալիս, ահապէս վիշտ է պատճառում
ազգի և եկեղեցու զոյգութեան նախանձա-
խնդիրներին, իսկ երբ որ Հայաստանի ամ-
բողջ զաւառները դատարկվում են հայե-
րէց, որոնցից շատերը, նոյն եկեղեցական-
ների անփոյթութեան շնորհով, կամ զաղ-

թում են հայրենիքից, կամ հայրենիքում
մնալով ամբողջ համայնքներով կրօնափոխ
են լինում,—այդ տեսակ զգալի ազգային
կորուստներ ամենաին չեն արժանանում և.
Պոլսի թէ աշխարհական և թէ հոգեւորական
զործիչների ուշադրութեան, որոնք հաւա-
տացած են թէ մեծ ծառայութիւն են ա-
րել ազգին և եկեղեցուն, նոյն իսկ նպաս-
տել են ազգի և եկեղեցու զոյգութեան պահ-
պանելուն, փրկել են ազգն անգամ,—ան-
լսելի խտրութեամբ պատժելով մի ինչ որ
ողորմելի արարածին, որ քրիստոնէայ եղած
ժամանակն էլ միայն լուի անունով հայ էր...

Բայց մի ինչ որ անբարոյական Շահպա-
զեան երկրորդ անգամ պատժվել է, կամ
նոյն Շահպազեան եկեղեցուց անիծված լի-
նելով, ծարահատված մահապատկանութիւն
է ընդունել,—և ահա ազգի զոյգութեանը
մեծ վտանգ, ահապէս վտանգ է սպառ-
նում... Նկեղեցին յուզվում է և միջնադա-
րեան անէծք, նոյնված է կարգում ողորմելի
էֆէնդիի ու նրա ընտանիքի գրկին...

Շահպազեան իր ընտանիքով անիծված
է,—ազգը ու եկեղեցին փրկված են, եկե-
ղեցին փառաւորվում է նա կատարել է իր
պարտաւորութիւնը, նա հրաշալի գործ է
արել, քաջագործութիւն է արել,—իսկ մի
և նոյն ժամանակ Հայաստանը դատարկ-
վում է հայերից, հայերը խմբով մահ-
մետականութիւն են ընդունում... Ինչ
փոյթ եկեղեցուն:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Ներքին-Ազգութիւն, 13 յուլիսի

Կարգադիրը «Մշակ» 69-որդ համարի ներքին
լուրերում «Որդաբեր չեղամապահական չըջանի
մասին» հաղորդած տեղեկութիւնները, որի մէջ
լրատուն չը գիտնէր թէ ինչից զրկված, առանց
ճիշդ տեղեկութիւն իմանալու, տալիս է զանա-
զան անստույգ տեղեկութիւններ մեր ձեռնարկու-
թեան մասին, վստայութեամբ աւելորդ չենք համա-
րում մի քանի հաստատ և ճիշդ փաստերով ջրել
լրատուի կերպարանաւորութեան տեղեկութիւն-
ները: Որքանի համար նա գրում է «Միւս-
գամայն ոչինչ բերք չէ տուել այն սերմը, որ տե-
ղական բոժոժից է եղել պատրաստած, և որից՝

վրդի աշխարհայեցողութիւնը, նրա վիշտը, ուրա-
խութիւնը, այնտեղ երևում է և նրա պարզ, ոչ
այնքան բարդ profession de foi...

Մեր ամբողջ տեղական բանաստեղծութիւնը
կրում է իր վրա զարմանալի ճշման, բռնու-
թեան հեղեղներ. ողբը, լացը, հեկեկալները կարծես
է ժողովրդի երգի զրկել ամեն մի խօսքից, եր-
գերի եղանակները վերին աստիճան մեղամաղձոտ,
միատեսակ, ճշնոյլ, սիրտ յուզող բնաւորութիւն
ունեն... Անկասկած, ի հարկէ, որ երգերի այդ
առաձգական, սիրտ մաշող ու ճշնոյլ եղանակնե-
րի մէջ պէտք է տեսնել մեր անողորմ պատմու-
թիւնը, ժողովրդի վատաբախտ անցեալը...

Այդ մասը կօրկրտ, գոյնը կրում է իր վրա
զիւստաւորապէս այն բանաստեղծութիւնը, ուր ժո-
ղովրդը երգում է ընտելութիւնը, փառաբանում
նրան, լաց ու կոծը, սրտի ամենազգացված հա-
ռաչանքները այդ տեսակ բանաստեղծութեան
խղի ու ծովն են կարծում Այստեղ մնալ կը
յիշենք բանաստեղծութիւններ մի ահապէս ժողո-
ւածուի մասին, որ այս կամ այն ձևով, վարիա-
ցիաներով, երգվում է թէ Տաճկա-Հայաստանում և
թէ Արարատեան դաշտի ամբողջ տարածութեան
վրա. դա մեր հուշակաւոր լէլէն է—ապապար-
մարդու զաւուն բոսկիները քաղցրացնող այդ աս-
տուածային երգը: Լէլէի ամենալաւ տեսակները
ստեղծագործում է, զիւստաւորապէս, մեր յայտնի
պատմական Կոզը և Բախտեղից տարածվում է
Արարատեան ամբողջ տափարակի վրա: Լէլէն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԱՒԱՌԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ *

VII

Alles war gesagt, doch
Alles bleibt zu sagen
Goethe

Բանաստեղծութիւնը, ստում է Գեթէ, աւելի
աղղում է հասարակական կեանքի կազմակերպու-
թեան սկզբունք, երբ այդ կազմակերպութիւնը
զեռ կոպտ, կիսավարկութեան է, կամ երբ
կոլտուրան վայր է ընկնում, երբ հրապարակ է
զալլում մի նոր, օտար կոլտուրա, այնպէս որ
կարելի է տեսնել, որ բանաստեղծութիւնը պայմա-
նաւորվում է նորութեան աղղեցութիւնով:

Այդ կարծիքի վրա հիմնվելով կարելի է ասել,
որ մեր արդի ժողովրդական բանաստեղծութիւնը
երկու պայմանների նշաններն էլ է կրում. մեր
հասարակութեան մեծամասնութիւնը—գաւառը,
զիւլը, զեռ իր զարգացման այն շրջանի մէջն է,
կրր տակաւին արեւադարձ է բանաստեղծութիւ-
նը, երբ արձակը (проба), եթէ չստանա անձանութիւն
է, գոնէ նոր է մեր կեանքում, երկրորդը մեր

կեանքը, նոր կոլտուրայի, նոր քաղաքակրթու-
թեան աղղեցութեան տակ, զրկել է նշմարելի
կերպով սկսվել է վերաստեղծվել, նորոգվել...

Ջարմանալի յաջող դատաւորել զիմէ ընտելու-
նը երեկոթները և իրար նման, մի տեսակ բանե-
րը կապել միմեանց հետ, մի տեսակ ներդաւածու-
կութիւն պահպանել նրանց մէջ...

Անդրկովկասի ժողովրդական բանաստեղծու-
թիւնը և մեր երկրի Վրաստան—Արաքսը, մինչև որ
ժողովրդի կրթութիւնը բացառապէս զրկել է պայ-
մանաւորվում է բանաստեղծութեան աղղեցու-
թեամբ, միշտ անբաժան կը մնան: Անդրկովկասի
զրկել է ամբողջ տարածութեան վրա Արաքսը, որ-
պէս մի բանաստեղծական ժապաւեն, կապում է
մեր երկրի այն բոլոր տեղերը, ուր, այս կամ
այն պայմանի շնորհով, գեղարուեստը աւելի
զարգացած է, ուր ծաղկում է բանաստեղծութիւ-
նը ու երաժշտութիւնը: Մուշ, Արարատեան աշ-
խարհ, Գոլթեան, Արցախ, միացած Արաքսով,
այս վերջինով հանգրժն, կաղում են մեր տեղա-
կան բանաստեղծութեան ցիլլը, շրջանը: Արաքսի
չորջրը, նրա ամբողջ տարածութեան վրա, միշտ
ապրում է մեր ժողովրդական հանձարը:

Մտաւոր զարգացման առաջին աստիճանների
վրա ազդելը միշտ իրանց անցեալին, իրանց
պատմութեանը տալիս են բացառապէս կրօնա-
կան, մի տեսակ խորհրդաւոր բնաւորութիւն, դը-
րա հետ անբաժան է, ի հարկէ, և պատկառանքի

այն բարձր զգացմունքը, որ ունի ժողովուրդը դէ-
պի հայրենի ընտելութեան:

Արաղ Արաղ խան Արաղ
Մին գեղեղան զալխան Արաղ,
Սօվզելիմ դեամիլաղիբ,
Գեռա դան էլամա, խան Արաղ...

Այդ տեսակ բարձր պատկառանք աղղում է ժո-
ղովրդի վրա Արաքսը, Արաքսի ջրից կախված
նրա հողերի բերքը, Արաքսը միշտ վրայ է եղել
նրա անբարբառ հեկեկանքներին, նրա սև օրերին,
նրա հաղուազիւտ ուրախութիւններին...

Մեր ժողովրդական բանաստեղծութիւնը երկը
մասերի կարելի է բաժանել: Առաջինը—գիւղացի-
ական բանաստեղծութիւն (географическая поэзия),
որ կաղում էր մեր անցեալ յորումի նիւթը,
նրա անբարբառ հեկեկանքներին, նրա սև օրերին,
նրա հաղուազիւտ ուրախութիւններին...
Մեր ժողովրդական բանաստեղծութիւնը երկը
մասերի կարելի է ասել, զգացմունքաւորութեան կիր-
թը—սէրը (эротическая поэзия): Բանաստեղ-
ծութեան մէջ արտաբայություն է ժողովրդական ամ-
բողջ հանձարը, այդտեղ երևում է աշխատան-
ւանված ժողովրդական փիլիսօփայութիւնը, իսկ
երրորդը մասը, այդ էրօսն է, ուր երգվում է, եթէ
այսպէս կարելի է ասել, զգացմունքաւորութեան կիր-
թը—սէրը (эротическая поэзия): Բանաստեղ-
ծութեան մէջ արտաբայություն է, իր բոլոր լաւ ու
վատ կողմերով, ժողովրդական կեանքը, բանա-
ստեղծութիւնը ժողովրդի հոգու հայելին է. այնտեղ
կը տեսնէք զուր նրան իր ամբողջութեամբ, բա-
նաստեղծութիւնը պարունակում է իր մէջ ժողո-

*) «Մշակ» 57, 83, 121, 122, 136, 1886 թ.
և 25, 26, 32 1887 թ.

Լօտ, մայր եկեղեցում մաղթանք լինելուց յետոյ, իշխանը մեծ ժողովի շինութեան մէջ երդումն տուեց հաւատարիմ լինել սահմանադրութեանը Տիրութեան հոգեւորականութեան, բողոքական կառավարչներին, ազգային ժողովի պատգամաւորներին և զինուորական ու քաղաքական աստիճանաւորներին ներկայութեամբ Կարգադիւլից աշխարհի մեծ ժողովի հասցէին գրած իշխանի շնորհակտանքը Այսօր, երկուշաբթի, նշանակած է մեծ ժողովի նիստը նոր միանաւորութեան կազմելու համար Երեւանի իշխանը միտադրութեամբ ունի Ֆիլիպոսով քանդակի աշխատեղից կերթայ Սօֆիա:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԻ ԲՅՈՒՄ

Օգոստոսի 2-ին

Ռուսաց 1 րոպէ 1 օնգոնի վրա արժէ	211 ¹ / ₃₂ պէնտ.
— — — — — 1 օնգոնի վրա —	178 ³ / ₄ պէն.
— — — — — 1 օնգոնի վրա —	221 ⁷ / ₈ տան.
Ոսկի — — — — — արժէ	9 > 36 Կ.
Մարտային կուպոններ — — — — —	182 > 50
Արծաթ — — — — — արժէ	1 > 29
Բորսային դիվիդենդներ — — — — —	4 ⁵ / ₈ > 61 ² / ₀
Պետական բանկ. 5% տոմս 1-ին շրջանի 100 > 12	
— — — — — 2-րդ —	98 > 75
— — — — — 3-րդ —	99 > 12
— — — — — 4-րդ —	99 > 12
— — — — — 5-րդ —	99 > 12
— — — — — 6-րդ —	— > —
Արեւելեան 5% փոխառութ. 1-ին շրջ. 99 > 12	
— — — — — 2-րդ —	99 > 12
— — — — — 3-րդ —	99 > 12
Ներքին 5% առաջին փոխառութ. 266 > 50	
Երկրորդ — — — — —	252 > —

5 2% րէնտա	102 > 50
Ռուսաց 1 րոպէ 1 օնգոնի վրա —	193 > 25
Յօթերորդ կօնսոլիդաց փոխառութեան	165 > 37
Նոր երկաթագլուխ րէնտա	99 > 50
5% քաղաքական թղթեր կուպոն.	— > —
— — — — — փոխ. կուպ. րէնտ.	166 > —
— — — — — քաղ. կուպ. րէնտ.	98 > 62
5 1/2% քաղաքական թղթեր խնդիր կալուած. րանկի,	98 > 87
6% քաղաքական թղթ. խնդիր կալ. րանկ.	103 > —
— — — — — Պօլտավայի —	103 > —
— — — — — Պետ. Զուլայի —	102 > 75
— — — — — Կիւմի —	102 > 50
— — — — — Մօսկվայի —	102 > 62
— — — — — Բեսարաբ. Զաւր. —	102 > 50
— — — — — Նիժ. Սամար. —	102 > 62
— — — — — Վիլնայի —	102 > 25
— — — — — Թիֆլիսի — 27 և 43 տ. 99	— > —
— — — — — Բուխարայի — 18 և 43 տ. 99	— > —

Վ. Օլժմիկ-Կամսկի րանկի ակցիաները 733 > —
Ռուսաց երկաթագլուխները զլուստ. րանկ. 270 > 50
Իրիսիսկ-Վ. Օլժմիկ րանկ. 84 > 50
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ. 95 > 75
Մօսկվայի քաղաք. օբլիգացիաներ. 96 > 25
Օբլիգացի. — — — — — 96 > 25
Թիֆլիսի քաղաք. կուպ. րանկ. օբլ. 83 > 75
Նոր փոխառութեան. 83 > 75
Ս. Պետերբուրգի քաղաքային տրամադրութեան ֆոնդերի վերաբերմամբ ամուր է:

Խաղաղութ. հրապարակաւ ԳԻՒԳՈՐ ԱՐԾՈՒՆԻՆ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԲԱԳՈՒԻ ՀԱՅՈՑ ԾԻԱԿԱՆ ԵՐԿԱՆՈՒ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԵՋ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՈՒՆԵՐԻ խնդիրները ընդունելութեանը սկսել է և կը շարունակվի մինչև սեպտեմբերի 1-ը: ԻՆՏԻՐՆԱԿԱՆ ԶԵՏ պէտք է ներկայացնել հոգաբարձութեան զանազան պ. Աւետիս Ղուկասեանցին, առաւօտեան 10 ժամից մինչև 12 ժամը, Պօլիգլոսկայ փողոց, Առաքելեանցի գրասենեակը: ԿԻՍՍՄԵՍՈՒՄԱՆ 6 ՐՈՒՐԻՆ ՎԱՐՁԸ ԿԱՆԻՒԿ Է Թէ նոր և թէ հին աշակերտները համար:

1—3

ԿԻՆԻՐԻՇԿ ՏԻԿԻՆ ՄԱՐԻԱՄ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ Ընդունում է հիւանդներին, երեկոյան

ժամը 6—7, իր բնակարանում, Ստարո-Արսենաւայա փողոց, № 20, տուն Բաբրաձէի: 2—6 (հ. շ.)

ԱՊԱԿԻ ԳՈՐԾԱՄԱՆ

Բարօն Ֆօն ԿՈՒՉԵՆԲԱՄԻ պատրաստում է

ԼԱՄՊԻ ԱՊԱԿԻՆԵՐ

և լամպի ուրիշ պարագաներ, չափաւոր գներով: Մանրամասնութիւնները կարելի է իմանալ Սիմեոն և Գալսէի գործակալութեան գրասենեակում, Թիֆլիսում:

2—10 (հ. ե.)

Մի պարոն, ունենալով իր մօտ մեծ քանակութեամբ «ՊԱՍԿ» և «ԹՁՈՒԿ» վերնադրով գրքերից, ցանկանում է այդ գրքերը ն ու լ ի ռ ե լ ձ ի ի ա պ է ս գ ա ն ա ղ ա ն տ ե ղ ե ռ ի հ ա յ ո յ ղ ա ղ ո յ ն ե ռ ի ն: Ամեն մի դպրոց կարող է ստանալ իւրաքանչիւր գրքից ու աւելի քան երեք օրինակ: Այն դպրոցները, որոնք կամենում են ստանալ այդ գրքերից, պէտք է ուղարկեն իւրաքանչիւր գրքի մի օրինակի համար մի հատ հինգ կօպէկանոց փոստային մարկա, իբրև ձանապարհաձախ: Զանկացողները պէտք է դիմեն հետեւեալ հասցեով. Тифлисть, Редакция «Мшакъ», Теръ-Микаельяну.

2—10

ԱՌԵԻՏՐԵԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Ձ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր

ՎԵՑԵՐՈՐԻ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնադիտական առևտրական կրթութիւն ապա երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ձանապարհով հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատեստատ տալու եր:

Աւանդելի սուսարկայք ստը են՝ 1) Առևտրական հետեւութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համընթիւ վրա, 5) Առևտրական թղթաւորութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն, և 7) զեղարկութիւն:

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնները օգոստոսի 25-ից, ամենայն օր, երեկոյան 5-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլուկովում, Լաբորատորնայա փողոցի վրա, Յովհաննէս Ղորգանեանի տանը, № 11: Յրազիրը ու կանոնները կարելի է ստանալ ՁՐԻԱՊԷՍ եղբ. Ծովանդեանի բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաբարակացիները դիմում են կուրսերի հիմնողին.—въ Тифлисть, С. П. Ману-эльяну.

5—20 (հ. շ.)

ԹԱՌԻՔԻ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՆՈՐ Է մի ուսուցիչ և մի վարժուհի: Զանկացողները պէտք է դիմեն «Մշակի» խմբագրատանը:

3—4

ՄԻ ՎԱՐԺՈՒՂԻ ցանկանում է տնկել մասնաւոր դասեր տալ և պարագել երեկոյան հետ հայոց լեզուից: Ընդունում է նոյնպէս և զինքնուրիշ աշակերտներ և աշակերտուհիներ: Հասցէն հարցնել «Մշակի» խմբագրատանը:

5—5

ԲԱԳՈՒԻ երեքդասեան մասնաւոր ուսումնարանի կառավարիչ Փիրբուղաղեան սրանով յայտնում է պատուելի հասարակութեանը, որ օգոստոսի 1-ից սկսվում է դասերի քաղաքացիական, իսկ 15-ից աշակերտների ընդունելութիւնը: Ուսումնարանը այժմ ժամանակաւորապէս գտնվում է նրա սեփական տան, օրիորդաց գիմնազիայի նոր շինութեան դիմաց, որը պիտի տեղափոխվի քաղաքի կենտրոնը: Կառավարութեան թողաւորութեամբ սեպտեմբերից բացվելու է նոյն ուսումնարանում կրթական դասընթացը այն աշակերտներին համար, որոնք պատրաստվում են կրթական գիմնազիայի երկրորդ դասատուն մտնելու:

2—5

ԼՈՅՍ ՏԵՍՍԻ

Ի Ա Յ Ֆ Ի Ի

Կ Ա Յ Ծ Ե Ր Ի

ԵՐԿՐՈՐԻ ՀԱՏՈՐԸ

Դ Ի Ն Ն Է 2 Բ ՈՒՐԸ Ի 50 Կ Օ Պ.

Ձանապարհի ծախսը հեղինակի վրա է: Գիրքը բաղկացած է 722 մեծատիպ երեսներից: Վաճառվում է «Թիֆլիսի կենտրոնական գրաքանութան» գրաքանութանը և հեղինակի մօտ: Բաժանորդները կանխապէս պէտք է յայտնեն իրանց հասցէն, եթէ տեղափոխվել են իրանց նախկին տեղից:

8—10

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԻ, որ ուսումը տւարտել է բէալական ուսումնարանում, ԿԱՄԵՆՈՒՄ Է ԴԱՍԵՐ ՈՒՆԵՆԱԼ: Հասցէն հարցնել կարելի է «Մշակի» խմբագրատանը:

2—2

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Ս Ս Լ ՈՒՄՆ Ե Ղ Ի Վ Գ Ր Ե Ն Ի

«ԱՆԻՐԿՈՎԱՍՍԻ ԱՐԲՈՒՆԱԿԱՆ ԳԻՐԱՅԻՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՎ ՆԻԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՄ»-Ի (СВОДЪ МАТЕРІАЛОВЪ ПО ИЗУЧЕНІЮ ЭКОНОМИЧЕСКАГО БЫТА ГОСУДАРСТВЕННЫХЪ КРЕСТЬЯНЪ ЗАКАВКАЗСКАГО КРАЯ) առաջին հատորը, որը բաղկացած է հետեւեալը: 1) Երևանի նահանգի գիւղական համայնքի վարչական-տնտեսական ներկայացուցիչները և 2) Գիւղական հողատիրութեան տեսակները Բուխարայի նահանգում:

ԳԻՐԻՆ Է 3 ՐՈՒՐԻՆ

Իսկ ուսուցիչների և ուսանողների համար 2 րոպէի: Զանկացողները պէտք է դիմեն «Մշակի» խմբագրատանը:

3—6

ԼՈՅՍ ՏԵՍՍԻ ՀԱՅԵՐԷՆ ԼԵՋՈՒՈՎ

ՁԻՆՈՒՈՐԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ Ո Վ Կ Ա Ս Ս Ի Հ Ա Մ Ա Ր

Գ Ի Ն Ն Է 30 Կ Օ Պ Է Կ:

Վաճառվում է «Մշակի» խմբագրատանը և հետեւեալ տեղերում, Թիֆլիսում՝ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ և ՈՐԻՇ ԳՐԱՎԱՃԱՆԱՆՈՅՆԵՐՈՒՄ, ՏԵՐ-ՅՈՒՆԵՐԵԱՆԻ ԾԽԱԽՈՒՄԻ ԽԱՆՈՒԹԻՄ (Կովկաս հիւրանոցի տակ), ՄԻՐՂԱ ՏԵՐ-ԳՐԻԴՐԵԱՆԻ ԾԽԱԽՈՒՄԻ ԽԱՆՈՒԹԻՄ (Սիօնի փողոցի վրա), ԵՐԵՒԱՆՈՒՄ՝ Կ. ԴԱՏԱՄԵԱՆԻ ԽԱՆՈՒԹԻՄ, ԲԱԳՈՒՄ՝ ԵՐԻՐԱԿԱՆԻ ԽԱՆՈՒԹԻՄ, ԳԱՆՁԱԿՈՒՄ՝ Աղայեանի Խանութում, ԵՆՈՒՄ՝ Դադեան եղբայրների գրաքանութանում: ՆՈՒՄ՝ ուսուցիչ և ԴԱՎԵՆԻՄԻ մօտ, ԱԼԷԿՍԱՆԴՐԱՊՈՎ՝ Վհայեանեանի Խանութում: Օտարաբարակացիները պէտք է գիրքը ստանալու համար պէտք է դիմեն հետեւեալ հասցեով. Тифлисъ, X. Мадумянцу, въ редакцію «Мшакъ».

5—10

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻ ՀԱՅՈՑ ԵՐԿԱՆՈՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ հարկաւոր է ՌՈՒՍԱՑ ԼԵՋՈՒՈՒ ՈՒՍՈՒՑԻՋ շաբաթական 24—26 դասով, իսկ օրիորդաց ուսումնարանի համար՝ ՄԻ ՎԱՐԺՈՒՂԻ հայոց լեզուի, թուաբանութեան և ձեռագործի, շաբաթական 25 դասով: Զանկացողները թող դիմեն պայմանները իմանալու համար կամ «Մշակի» խմբագրատանը և կամ ուղղակի դպրոցի հոգաբարձութեանը:

2—2

ԳՈՒՇԵԹԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԻԱԿԱՆ միասեան դպրոցի համար հարկաւոր է ՄԻ ՈՒՍՈՒՑԻՋ, համաձայն պահանջեալ ծրագրի, որը պէտք է աւանդի հայոց լեզու և թուաբանութիւն: Պայմանների մասին իմանալ ցանկացողները թող անժամանորայա դիմեն հոգաբարձութեան կամ տեղական գործակալ Սարգիս քահ. Երեցեանին:

2—4

EXPORTATION-IMPORTATION
CONSTANTIN P. CHÉHIA NTZ
MILAN (ITALIE)

Կոնստանտին Պ. ՇԵՆԱՆՑԻ առևտրական գրասենեակը լինելով ՄԻԱՆ, և ունենալով ուղղակի յարաբերութիւններ Իտալիայի, Շվեյցարիայի և Ֆրանսիայի քաղաքներին հետ, կընդունի յանձնարարութեամբ ապրանքների ծախսու համար հետեւեալները՝ մետաքս, բոժոժ, մետաքսի և բոժոժի մնացորդ, բուրդ, բամբակ, ցորենիցէն, նաւթ և ընդհանրապէս Կովկասեան միւս ամեն տեսակ ապրանքները, որոնք ծախվում են Եւրոպայում: Զանձնարարութեամբ կընդունի դարձեալ առնել Եւրոպայի ամեն տեսակ ապրանքների Կովկասի համար: Ամբողջ ապրանքները ստանալուց աժան և ձեռնառու պայմաններով փող կը տայ ի հաշիւ մանրամասն տեղեկութեանց համար դրի այս հասցեով. Monsieur Constantin P. Chéhiantz, № 18, Via Lauro, Milan, (Italie) МИЛАНЪ (Италія).